

7008

Կ ԿԵՆՏՎՈՄԻ
ՊԼԵՆՈՒՄԻ
ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ



ՀՐԱՏ - ՅԵՐԵՎԱՆ - 1937

Հ. 71

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐԻ ԲՈԼՈՐ ՑԵՐՎԻՐՆԵՐԻ, ՄԻԱՅՆ

17.09.2013

5208

ՀՀԿՀ
Z-22

23 SEP 200

120 NOV 2009

ՅԱՄԿ (Բ) Կ ԿԵՆՏՎՈՄԻ
ՊԼԵՆՈՒՄԻՄԻ
ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(1937 թ.)

5084

ԽՀ
ԽՀ 789

ՀԱՅԿՈՒՄՀԱՐԱՑ

ՅԵՐԵՎԱՆ

1937



ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՊԼԵՆՈՒՄԻ ՄԱՍԻՆ

Որերս վերջացավ Համ Կ(բ)Կ Կենտկոմի պլենումը։ Պլենումը ֆնիարկեց այն հարցը, թե ինչ խնդիրներ են դրված կուսակցական կազմակերպությունների առջեվ՝ նոր Սահմանադրության հիման վրա կատարվելիք՝ ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի առաջիկա ընտրությունների կապակցությամբ։ Պլենումն ընդունեց համապատասխան բանաձեվ, վորը հրապարակվում է ստորեվ։

Այնուհետև պլենումը ֆնիարկեց տնտեսական ու կուսակցական շինարարության հարցեր և ընդունեց համապատասխան գործնական վորոշումներ։ Պլենումը ֆնիարկեց նաև Բուլշարինի ու Ռիկովի հակակուսակցական գործունեյության հարցը և վորոշեց վտարելիքանց Համ Կ(բ)Կ շարքերից։

О решениях пленума ЦК ВКП(б) (1937 г.)

Армпартиздат, Ереван. 1937.

ԿՈՒՍԱԿՑԱԿՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ-
ՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԽՍՀՄ-Ի ԳԵ-
ՐԱԴՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ՝ ՆՈՐ ԸՆՏՐԱԿԱՆ
ՍԻՍՏԵՄՈՎ ԿԱՏԱՐԵԼԻՔ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ-
ՆԵՐԻՆ ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑԱԿՆ - ՔԱՂԱՔԱ-
ԿԱՆ ԱՃԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱԽԱՆ ՎԵ-
ՐԱԿՎԱԹՈՒՑՈՒՄԸ

Համ Կ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՊԼԵՆՈՒՄԻ ԲԱՆԱՏԵՎԸ քննկու-
ժամանակի գեկուցման առթիվ՝ ընդունված 1937 թ.
փետրվարի 27-ին

ԽՍՀ Միության նոր Սահմանադրությունը մտցնելը շրջադարձ է նշանակում յերկրի քաղաքական կյանքում։ Այդ շրջադարձի եյությունն է ընտրական սիստեմի հետագա դեմոկրատացումը՝ խորհուրդների վոչ լիովին հավասար ընտրությունները հավասարով, բազմաստիճանը՝ ուղղակիով, բացը՝ փակով փոխարինելու իմաստով։

Յեթև նոր Սահմանադրությունը մտցնելուց առաջ գոյություն ունեցին ընտրական իրավունքի սահմանափակումներ պաշտամունքի սպասավորների, նախկին սպիտակ-գվարդիականների, նախկին մարդկանց և հանրուգուտ աշխատանքով չպրադվող անձերի համար, ապա նոր Սահմանադրությունը դեն և նետում ընտրական իրավունքի ամեն մի սահմանափակում քաղաքացիների այդ կատեգորիաների համար, ընդհանուր դարձնելով պատգամավորների ընտրությունները։

Յեթև առաջ պատգամագորների ընտրությունները հավասար չելին, քանի վոր գոյություն ունեցին ընտրությունների տարրեր նորմաներ քաղաքային և գյուղական բնակչության համար, ապա այժմ ընտրությունների հավասարությունը սահմանափակելու անհրաժեշտությունը վերացված է, և բոլոր քա-

զաքացիներն իրավունք ունեն հավասար հիմունքներով մասնակցելու ընտրություններին:

Յեթե առաջ Խորհրդային իշխանության միջին ու բարձր որդանների ընտրությունները բազմաստիճան եյին, ապա այժմ, ըստ նոր Սահմանադրության, բոլոր խորհուրդների ընտրությունները՝ սկսած գյուղականներից ու քաղաքայիններից մինչև Գերագույն Խորհուրդը, կատարելու յէն քաղաքացիներն անմիջականորեն ուղղակի ընտրությունների միջոցով:

Յեթե առաջ խորհուրդների համար պատգամավորների ընտրությունները կատարվում եյին բաց քվեարկությամբ և ցուցակներով, ապա այժմ, պատգամավորների ընտրությունների ժամանակ, քվեարկությունը լինելու յէ գաղտնի և վոչ թե ցուցակներով, այլ ըստ ընտրական ըրջանների առաջադրվող առանձին թեկնածությունների:

Վերջապես, Սահմանադրությունը մըտցնում է համաժողովրդական հարցում (ոեփերենդում):

Ընտրական սիստեմի այլ փոփոխությունները նշանակում են խորհրդային որդանների նկատմամբ մասսաների ունեցած վերահսկողության ուժեղացումը և մասսաների առաջ խորհրդային որդանների ունեցած պատասխանատվության ուժեղացումը:

Գաղտնի քվեարկությամբ ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունք

մտցնելու հետևանքը կլինի մասսաների քաղաքական ակտիվության հետագա ուժեղացումը, աշխատավորների նոր խավերի ներգրավումը պետության կառավարմանը: Դրանով իսկ պրոլետարիատի դիկտատուրան դառնում է բանվոր դասակարգի կողմից հասարակության պետական դեկավարման ավելի ձկուն, և հետևաբար ավելի հզոր սիստեմ, բանվոր դասակարգի դիկտատուրայի բազան ընդարձակվում է, նրա հիմքն ավելի հաստատում է դառնում:

Այդ ըրջադարձը կատարելապես զինվածդիմավորելու համար՝ կուսակցությունն այդ ըրջադարձի գլուխ պետք է կանգնի և լիակատար չափով ապահովի իր դեկավար դերը յերկրի գերագույն որդանների առաջիկա ընտրությունների ժամանակ:

Պատրաստ են արդյոք կուսակցական կազմակերպություններն այդ տեսակ դեկավարման համար:

Ի՞նչ է պահանջվում կուսակցությունից, վորապես նա կարողանա կանգնել այդ ըրջադարձի գլուխ, նոր, մինչև վերջը դեմոկրատական ընտրությունների գլուխ:

Դրա համար պահանջվում է, վոր կուսակցությունն ինքն անցկացնի հետևողական դեմոկրատական պրակտիկա, վոր նա ներկուսակցական կյանքում մինչև վերջն անցկացնի, դեմոկրատական ցենտրալիզմի հիմունքները, ինչպես այդ պահանջում է կուսակցության կանոնադրությունը, վոր նա ինքն ունենա անհրաժեշտ պայմանները, վորոնց չնորայն անհրաժեշտ պայմանները, վորոնց չնոր-

Հիվ կուսակցության բոլոր որդաններն ընտրովի լինեն, վոր քննադատությունը և ինքնաքննադատությունը զարգանան լիակատարչափով, վոր կուսակցական մասսայի առջև կուսակցական որդանների պատասխանատվությունը լիակատար լինի և վոր ինքը՝ կուսակցական մասսան լիովին ակտիվացվի:

Կարելի՞ յե արդյոք ասել, թե կուսակցական բոլոր կազմակերպություններն արդեն պատրաստ են կատարելու այդ պայմանները, թե նրանք արդեն լիովին վերակառուցվել են դեռևկատական ձևով:

Դժբախտաբար, լիակատար վստահությամբ չի կարելի ասել այդ:

Այդ մասին ե ասում կուսակցության կանոնադրության և ներկուսակցական դեմոկրատիզմի հիմունքների խախտման պրակտիկան, վոր գոյություն ունի մի քանի կազմակերպություններում:

Վորո՞նք են այդ խախտումները:

Կուսակցական որդանների ընտրականությունը, վորը սահմանված է կուսակցության կանոնադրությամբ, մի շարք կազմակերպություններում խախտվել ե: Կուսկազմակերպությունները չեն պահպանում կուսակցական որդանների ընտրությունների այն ժամկետները, վորո՞նք սահմանված են կուսակցության կանոնադրությամբ: Լայն չափով տարածվել ե գանազան դեկավար աշխատողներին վորպես շրջկոմների, քաղկոմների, յերկրկոմների, մարզկոմների, ազգային կոմիտեների կենտրոնների պլենումների անդամներ կոռպ-

տացիայի յենթարկելու վոչնչով չարդարացվող պրակտիկան:

Վերադաս կուսակցական որդանների կողմից կուսակցական կոմիտեների քարտուղարներին հաստատելու այն կարգը, վորը սահմանված է կուսակցության կանոնադրությամբ, մի շարք կուսկազմակերպություններում փաստորեն վերածված է նշանակման սիստեմի: Կուսկոմների քարտուղարների հաստատումը հաճախ տեղի յե ունենում նախքան նրանց ընտրվելը տեղական կուսկազմակերպություններում, իսկ գործնականում դրա հետևանքն է լինում այն, վոր տեղական կուսկազմակերպությունները հնարավորություն չեն ունենում քննարկելու հանձնարարություն չի ունենում աշխատողների առաջնարարությունը:

Ընտրական պաշտոններում հաստատելը և աշխատանքից հեռացնելը հաճախ տեղի յե ունենում կուսորդանների հարցման կարգով ընդունված վորոշումների միջոցով և առանց կուսակցական կոմիտեյի պլենումին հանձնարարելու նոր աշխատողների թեկնածությունները, ինչպես և առանց այս կամ այն կուսակցական դեկավարի հեկավարի համար աշխատողների կուսկազմակերպություններին բացատրելու:

Ինչ վերաբերում է կուսորդանների ընտրություններին, ապա մինչեւ այժմ ել գոյություն ունի մի պրակտիկա, վորի համաձայն թեկնածուների ցուցակների քննարկումը տեղի յե ունենում միմիայն նախնական խորհրդակցություններում, ավագների խորհրդակցություններում,

պատգամավորությունների ժողովներում շ
ըստ վորում, վորաֆես կանոն, թեկնածու-
թյունների շուրջը հենց պլենումներում ու
կոնֆերենցիաներում վիճաբանություններ չեն-
բացվում, քվեարկությունը կատարվում ե
ցուցակով և վոչ անձնապես, ու այդպիսով
ընտրական պրոֆեզուրան հասարակ ձեակա-
նության ե վերածվում:

Դեմոկրատական ցենտրալիզմի հիմունք-
ների խախտման այս բոլոր փաստերը վնաս են
հասցնում կուսակցությանը, վորովհետեւ դը-
բանք արգելակում են կուսակցության ան-
դամների ակտիվության աճումը, մեր կու-
սակցության կյանքում քաղաքական հատուկ
նշանակություն ունեցող ակտիվին զրկում են
զեկավար աշխատանքին մասնակցելու հնարա-
վորությունից, կուսակցության անդամներին
զրկում են կուսորդանների գործունեյությա-
նը վերահսկելու իրենց որինական իրավունք-
ներից և դրանով իսկ խախտում են զեկավար-
ների ու կուսակցական մասսաների ճիշտ
փոխհարաբերությունները:

Այդպիսի պրակտիկայի ցայտուն որինակ-
ներ են հանդիսանում վերջին ժամանակներս
Համկ(թ)կ կենտկոմի կողմից հայտնաբերված
այն փաստերը, վորոնք ցույց են տալիս կուսակ-
ցական-քաղաքական աշխատանքի աղաղակող
կերպով անուշադրության մատնված լինելը Ա-
զով-Սևծովյան յերկրկոմում, Կիւի մարզկո-
մում և Ուկրաինայի կ(թ)կ կենտկոմում և այլ
կուսկազմակերպություններում, վորոնք ար-
տահայտվում են կուսակցության կանոնադրու-

թյան ու դեմոկրատական ցենտրալիզմի
սկզբունքների կողիտ խախտումներով՝ կուս-
որդանների ընտրականությունից հեռանալու
և կոռապտացիայի անհանդուրժելի պրակտի-
կան մտցնելու իմաստով:

Համկ(թ)կ կենտկոմի պլենումն ընդ-
գծում ե, վոր կիեվի մարզկոմում ու Ազով-
Սևծովյան յերկրամասում հայտնաբերված
սխալ զեկավարման որինակները յե-
ղակի չեն, այլ այս կամ այն չափով հատուկ
են բոլոր յերկրային ու մարզային կուսկազ-
մակերպություններին:

Համկ(թ)կ կենտկոմի պլենումը գտնում
է, վոր այդ և գրանց նման թերությունների
վերացումն այն անհրաժեշտ պայմանն ե, ա-
ռանց մորի չեն կարող իրադործվել կուսակ-
ցության այն նոր խնդիրները, վորոնք առաջ
են յեկել յերկրի քաղաքական կյանքում
տեղի ունեցած շրջադարձի փաստի կա-
պակցությամբ, նոր Սահմանադրության
ընդունման ու գաղտնի քվեարկությամբ ընդ-
հանուր, հավասար և ուղղակի ընտրական
իրավունքի հիման վրա յերկրի դերագույն
որդանների առաջիկա ընտրությունների կա-
պակցությամբ:

Այդ պատճառով անհրաժեշտ ե վերակա-
ռուցել կուսակցական աշխատանքը, հիմք ու-
նենալով կուսակցության կանոնադրության
պահանջած ներկուսակցական դեմոկրատիզմի
հիմունքների անպայման ու լիակատար կեն-
ապործումը:

Համկ(թ)կ կենտկոմի պլենումն անհրա-

ժեշտ ե համարում իրականացնել և պարտավորեցնում ե բոլոր կուսկազմակերպություններին՝ կենսագործել հետեւյալ միջոցառումները.

1. Վերացնել կուսկոմիտեներում վորպես անդամներ կոռապտացիայի յենթարկելու ոլրակտիկան և վերականգնել կուսկազմակերպությունների ղեկավար օրգանների ընտրականությունը կուսակցության կանոնադրության համապատասխան:

2. Արգելել կուսորգանների ընտրությունների ժամանակ ցուցակներով քվեարկելու: Քվեարկումը կատարել ըստ առանձին թեկնածությունների, ընդունմին պահպանելով կուսակցության բոլոր անդամների համար թեկնածուներին մերժելու և նրանց քըննադատելու անսահմանափակ իրավունք:

3. Կուսորգանների ընտրությունների համար սահմանել թեկնածուների փակ (գաղտնի) քվեարկություն:

4. Բոլոր կուսկազմակերպություններում անցկացնել կուսորգանների ընտրություններ, սկսած սկզբնական կուսկազմակերպությունների կուսկոմիտեներից և վերջացրած յերկրային, մարզային կոմիտեներով ու ազգային կոմիտաների կենտրկոմներով, ավարտելով ընտրությունները վոչ ուշ մայիսի 20-ից:

5. Պարտավորեցնել բոլոր կուսկազմակերպություններին՝ կուսակցության կանոնադրության համապատասխան խստիվ պահպանել կուսորգանների ընտրությունների ժամկետները. սկզբնական կուսկազմակերպություններում — տարին մեկ անդամ, ըրջանա-

յին ու քաղաքային կազմակերպություններում — տարին մեկ անդամ, մարզային, յերկրային ու հանրապետական կազմակերպություններում — մեկ և կես տարին մեկ անդամ:

6. Սկզբնական կուսկազմակերպություններում ապահովել համագործարանային ժողովներում կուսկոմներ ընտրելու կարգի խիստ պահպանումը, թույլ չտալով ժողովների փոխարինումը կոնֆերենցիաներով:

7. Լիկվիդացիայի յենթարկել ընդհանուր ժողովները փաստորեն վերացնելու և ընդհանուր ժողովները ցեխային ժողովներով ու կոնֆերենցիաներով փոխարինելու այն պրակտիկան, վոր գոյություն ունի մի շարք սկզբնական կազմակերպություններում:

ՀՕԾ
ՀՕԾ
ՀՕԾ
ՀՕԾ



ԻՆՔՆԵՐԻՆԵՐԱՏՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՄԱՍՍ-
ՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ՆՁԵՆԵ-
ԲԱՆՈՎ

1937 թ. մարտի 6-ի
„Правда“ № 64 (7030)

Համ Կ(ր)կ ԿԵՆՏՎՈՒՄԻ որերս վերջացած պլենումը
տեր կուսակցության պատմության մեջ կմտնի վոր-
պես նրա կարևորագույն եջերից մեկը։ ՊԼԵՆՈՒՄԻ նը-
շանակությունը հսկայական է մի շարք պատճառնե-
րով, և առաջին հերթին այն պատճառով, վոր նա-
գումարվեց Ստալինյան Սահմանադրությունը մտցը-
վելուց անմիջապես հետո, մի Սահմանադրություն,
վոր շրջադարձ է հանդիսանում յերկրի քաղաքական
կյանքում։

ՊԼԵՆՈՒՄՆ իր առջև խնդիր դրեց՝ ստուգել, թե
ի՞նչ չափով պատրաստ են կուսակցության բոլոր
ողակները՝ այդ շրջադարձն ամբողջապես զինված
դիմավորելու համար։ ՊԼԵՆՈՒՄԻ հսկայական նշանա-
կությունը նրա ընդունած վորոշումներն են, վորոնք
բոլցեկիներին հատուկ ամբողջ սրությամբ ու ինքնա-
քննադատությամբ յերեան բերին կուսակցական
կազմակերպությունների աշխատանքի խոշորագույն
թերություններն ու սիսանները և նշեցին այդ հի-
վանդադին յերեւույթներն ու դրանց հետևանքները
վերացնելու ներգործոն ուղիները։

Ստալինյան Սահմանադրությունն արձանագրեց
բանվորների ու գյուղացիների սոցիալստական պե-
տության մեծ նվաճումները։ Կուսակցության գործի,
կոմունիզմի գործի հաջողություններն իրոք շատ մեծ
են։ Դրանց դրական նշանակությունը հսկայական է։

Բայց հաջողություններն ունեն նաև իրենց սովերությունները։ Վոչ բավականաչափ փորձված, վոչ բավականաչափ հմուտ մարդկանց մոտ հաջողությունները, ինչպես բազմիցս մատնանշել ե ընկեր Ստալինը, առաջ են բերում պարձենկոտություն, մեծամտություն, բերանքացություն, ապուշային հիվանդություն — անհոգություն։

Կուսակցական կազմակերպությունների շառ դեկավարներ մոռացել են, վոր Խորհրդային իշխանությունը հաստատված ե առայժմ յերկրագնդի մի վեցերորդ մասում և մեր յերկերը դանվում ե կապիտալիստական շրջապատճան մեջ։ Իսկ կապիտալիստական շրջապատճանը Փրադ չե։ Բուրժուական յերկիրները միշտ ել նույնիսկ իրար մոտ ուղարկել են և ուղարկում են բավական թվով հետախույզներ, լրտեսներ, վնասարարներ, վորոնց նպատակն ե կազմալուծել, թուլացնել հարևան պետության հղորությունը։ Յերկրագնդի հինգ վեցերորդ մասում իշխող բուրժուադիան չի կարող հաշտվել և յերբեք չի հաշտվի բանվորների ու գյուղացիների սոցիալիստական պետության հաջողությունների հետ։ Իսկ առանձնապես գաղագել են Փաշիստական պետությունները։ Կապիտալիստները մեզ մոտ կրկնապատիկ, յեռապատիկ ալելի լրտեսներ են ուղարկում, քան բուրժուական յերկիրները միմյանց մոտ։ Տրոցկիստները մի գյուտ են միջազգային Փաշիզմի համար։ Պահաժամար դիմակ ե ամեն տեսակ հակախորհրդային լրտեսականու աեռորիստական խմբեր կազմելու համար։ Տրոցկիզմն արդեն վաղուց դադարել ե բանվոր դասակարգի մեջ քաղաքական հոսանք լինելուց։ արոցկիստները գարձել են մարդասպանների մի բանդա։

Փաշիստական վարձկանների մի բանդա։ Այդ բանդայի չնչին թիվը չպետք է հանդստացնի մեզ։ պետք է տասնազատկել զգաստությունը։

ԽՍՀՄ-ի Ստալինյան Սահմանադրությունը, վորը մտցնում է ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունք՝ գաղանի քվեարկությամբ, ներկայացնում է իսկական, սոցիալիստական գեմոկրատիզմի՝ պատմության մեջ դեռ չտեսնված որինակ։ ՅԵՊ կուսակցությունը, Համերկանական պլենումի այսոր հրամարակվող բանաձեռում, վորը ընդունված է ընկեր Ժղանովի զեկուցման առթիվ, ընդգծում է, վոր նոր ընտրական սիստեմի պայմաններում «պրոլետարիատի դիկտատուրան դառնում է բանվոր դասակարգի կողմից հասարակության պետական զեկավարման ավելի ճկուն, և հետեւարարներ ավելի հզոր սիստեմ։ բանվոր դասակարգի դիկտատուրայի բազան ընդարձակվում է, նրա հիմքն ավելի հաստատուն է դառնում»։

Սակայն բանվոր դասակարգի դիկտատուրայի հիմքի ամբանալը վոչ միայն չի հեշտացնում, այլ ընդհակառակը՝ բարդացնում է կուսակցության, վարպետ սոցիալիստական շինարարության զեկավարի, ինդիքտները։ Նոր ընտրությունները նշանակում են յերկրի ամբողջ բնակչության քաղաքական ակտիվության հսկայական վերելք՝ յուրաքանչյուր յերկրամասում, յուրաքանչյուր քաղաքում, յուրաքանչյուր քաղաքությունում։ Այդ ակտիվությունը պետք է դիմավորի բոլցելիքյան կուսակցական կազմակերպությունը։ Իսկ այդ նշանակում է, վոր առաջին հերթին պետք է ակտիվացիվի մեր կուսակցության անդամների ամբողջ մասսան։ Այդ նշանակում է, վոր

յուրաքանչյուր կուսակազմակերպության մեջ պետք է ամենախիստ կերպով պահպանվեն բոլշևիզմի կազմակերպական հիմնական սկզբունքներից մեկը հանդիսացող ներկուսակցական դեմոկրատիայի հիմունքները:

Այսինչ, ներկուսակցական դեմոկրատիզմի սկզբունքը հաճախ խախտվում է զանազան ձևերով։ Այդ սկզբունքը խախտվում է նրանով, վոր չեն պահպանվում կուսակցական որդանների ընտրությունների ժամկետները և ընտրականությունը հաճախ փոխարինում են զանազան դեկամար աշխատողներին կուսակցության շրջանային, քաղաքային ու մարզային կոմիտեների կազմում կոոպտացիայի յենթարկելու պրակտիկայով, յերեմն ել պարզապես փաստորեն նշանակելով կուսկոմների քարտուղարներին։ Համկ(ր)կ Կենտկոմի պլենումը խստիվ դատապարտեց կուսակցության կանոնադրության այդ ռենսակ խախտումները, բոլշևիզմի սկզբունքների խախտումները և ցույց տվեց այդ խախտումների ամերող վնասակարությունն ու վտանգավորությունը։

Կենտկոմի պլենումը մատնանշեց, վոր դեմոկրատական ցենտրալիզմի հիմքերի խախտման այդպիսի փաստերը վնասակար են կուսակցության համար ամենից առաջ այն պատճառով, վոր դրանք «արդեկակում են կուսակցության անդամների ակտիվության աճումը, զրկում են մեր կուսակցության կյանքում քաղաքական հատուկ նշանակություն ունեցող ակտիվին դեկամար աշխատանքին մասնակցելու հասրավորությունից, զրկում են կուսակցության անդամներին պրադամների դործունեյությանը վերահսկելու իրենց որինականական համարականությանը»։

Խախտում են դեկամարների ու կուսակցական մասների ճիշտ փոխհարաբերությունները։ Իսկ մեր կուսակցությունը լենինի և Ստալինի բերանով միշտ կոչ ե արել, վորպեսզի դեկամարները վոչ միայն սովորեցնեն մասսաներին, այլ և սովորեն մասսաներից, կարողանան ոգտագործել մասսաների կյանքի հսկայական փորձը և միշտ յենթակա լինեն մասսաների վերահսկողությանը։

Կուսակցության կանոնադրության խախտումների հիմնական վտանգը՝ իսախտումներ, վոր հայտնաբերեց Համկ(ր)կ Կենտկոմի պլենումը՝ հանդիսանում ե դեկամար կուսակցական աշխատողների հնարավոր կտրվածությունը մասսաներից, կուսաշխատողների մի մասի բյուրոկրատանալը և փաստորեն նրանց անկոնտրու լինելը կուսակցական մասսայի առջե։ Յեզ Կենտկոմի պլենումն, իր վորոշումներում տալով կուսակցական կազմակերպությունների աշխատանքի թերությունների խորը վերըուծությունը, նշեց այդ թերություններն ու խախտումները վերացնելու միջոցները։ Այդ միջոցներից դիմավորն ե Կենտկոմի պլենումի հետեւյալ վորոշումը։

«Սահմանել կուսորդանների ընտրությունների ժամանակ թեկնածուների փակ (գաղտնի) քվեարկումը։

Բոլոր կուսկազմակերպություններում կատարել կուսորդանների ընտրությունները, սկսած սկզբնական կուսկազմակերպությունների կուսկոմիտեներից և վերջացրած յերկրային, մարզային կոմիտեներով ու ազգային կոմկումների Կենտկոմներով, ընտրություններն ավարտելով վոչ ուշ մայիսի 20-ից։

Դժվար ե գերազնահատել կենտկոմի պլենումի այս վորոշումների հսկայական կարևորությունը կուսակցության ամբողջ կյանքի համար։ Առաջիկա ամբիները կընթանան կուսակցական կոմիտեների ընտրությունների նշանաբանով, բոլշևիկյան ամենալայն ինքնաքննազատության նշանաբանով։ Կենտկոմը կուսակցության բոլոր անդամներին կոչ է անում ուժեղացնելու ինքնաքննազատությունը, ուժեղացնելու առեղծագործ ինքնաքննազատություն, վորն ողնի դուրս դցելու կուսակցությունից այն ամենը, ինչ վոր խորթ ե բոլշևիզմին։

Թեկնածուների փակ (գաղտնի) քվեարկումն առանձնապես մեծ նշանակություն կունենա կուսորդանների ընտրությունների ժամանակ։ Դա կուժեղացնի կուսակցական մասսայի առջև յուրաքանչյուր զեկավարի ունեցած պատասխանատվության զգացմունքը։ Դա բոլոր կուսկազմակերպություններում ամենալիակատար հնարավորություն կստեղծի առանց անձնավորությունները նկատի առնելու լայն ինքնաքննազատություն ծավալելու համար։ Դա կախիվացնի ամբողջ կուսակցական մասսային, կուժեղացնի նրա քաղաքական խորաթափանցությունն ու զգասատությունը։

Իսկ զգասատությունն այն հատկությունն է, վորն այժմ առանձնապես խիստ անհրաժեշտ ե բոլշևիկներին։ Այդ կրկին անդամ ակնհայտ կերպով հաստատում է վոչ միայն արոցկիստական բանդիտների, այլև աջերի հակակուսակցական յերկերեսանի աշխատանքի փասոր, աջեր, վորոնց պարագլուխները—բուխարինը և Ռիկովը—կենտկոմի պլենումի կողմից վտարվեցին կուսակցության շարքերից։

Կենտկոմի պլենումի վորոշումները վերջ կտան մի քանի զեկավարների աններելի, ապուշային անհոգությանը, զեկավարներ, վորոնց մեջ տարածված ելին այն փառած թեսրիաները, թե՝ սոցիալիստական շխարաբության յուրաքանչյուր հաջողությամբ իրը թե հանդարակում, մեղմանում ե սոցիալիզմի գեմ կապիտալիզմի գործակալության մղած պայքարի սրությունը։ Պինումի վորոշումները կողնեն կուսակցական կազմակերպություններին լրջորեն յերեսը դարձնելու դեպի կուսակցական-դաստիարակչական աշխատանքը։ Կուսակցությունը քիչ աշխատանք չի կատարել, վորպեալի մեր կագրերը աիրապետեն տեխնիկային։ Մենք քիչ չանք չենք թափել մասսաների տեխնիկական դաստիարակության վրա։ Կենտրոնական կոմիտեն, ընկեր Ստալինը, կարուկ կերպով հարց են զնում, վոր տեխնիկական դաստիարակության հին լողունգը լրացվի նոր լողունգով, բոլշևիզմին աիրապետելու, կագրերին քաղաքական դաստիարակություն տալու լողունգով։ Այդ կողնի վերջիններիս տեսնելու թշնամուն, վորքան ել դիմակայորված լինի նա։

Կենտկոմի պլենումի վորոշումները յերկարատեժամանակաշրջանի ծրագիր են հանդիսանում ամենալի կուսակցության համար։ Այդ ծրագիրը պետք է բողջ կուսակցության համար։ Այդ ծրագիրը պետք է բողջ կուսակցության համար յուրաքանչյուր կուսակցական արագորեն հասցնել յուրաքանչյուր կուսակցական աշխատանքի, մեր մեծ կուսակցության յուրաքանչյուր անդամի գիտակցությանը։ Պետք է արագորեն վերակառացվել, պետք է սկսել աշխատել ու ազրել նոր ձեռօվ։

Աւշագրությամբ ու խորապես ուսումնասիրել կենտկոմի պլենումի վորոշումները, հասցնել դրանք

յուրաքանչյուր բոլշևիկի — այս և այժմ առաջնա-
կարգ խնդիրը։ Կենտկոմի պլենումն իր վորոշումնե-
րով հզոր լծակ տվեց կուսակցության ձեռքը։ Այդ
լծակի ողնությամբ կուսակցական բոլոր կազմակեր-
պությունները կվերակառուցեն իրենց աշխատանքը,
վորպեսզի ավելի վստահորեն, ավելի ուժեղ թափով,
ավելի համախմբված սուած տանեն բանվոր գասա-
կարգի մասսաներին, ժողովրդական մասսաներին գե-
պի նոր մարտեր՝ հանուն կոմունիզմի։

**ՀՊՈՏՆԵՑՄԵԼ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ԸՆԴԱՄԻ ԽՐԱՎՈՒՔՆԵՐԸ**

1937 թ. մարտի 7-ի
„Правда“ № 65 (7031)

Պետական իշխանության բոլոր որգանների, բոլոր կուսակցական ու հասարակական կազմակերպությունների գործունեյությունն այժմ պետք է ընթանա Ստալինյան Սահմանադրության կենսադործման նշանաբանով։ Պատմության այդ մեծադույն փաստաթուղթը հսկայական շրջադարձ և նշանակում յերկրի քաղաքական կյանքում։

Յերկրի Գերագույն Խորհրդի առաջիկա ընտրությունների նախապատրաստությունն, անտարակույս, խորհրդային ժողովրդին կհասցնի քաղաքական ակտիվության նոր, ավելի բարձր աստիճանի, առաջիկական չորսության ընակչության բոլոր շերտերի անհամբնթաց կրերի բնակչության բոլոր շերտերի անհամբնթաց շարժում։ Այդ շարժումը, յերկրի քաղաքական կյանքում տեղի ունեցած այդ շրջադարձը գլխավորելու կոչված է մեր կուսակցությունը, վորն աշխատակոչված է մեր կուսակցությունը, զոկատն է հանդիսանում։ Նա պետք է ժողովրդի ակտիվությունն ուղղի բանվոր դասակարդի դիկտուրուրայի և սոցիալիստական մեծ հայրենիքի հզորության հետազա ամրապնդման հունով։

Մեր կուսակցությունը բանվոր դասակարդի միակ և իսկական կուսակցությունն է։ Ցարուկան մոայլ ընդհատակում, քաղաքացիական պատերազմի

փոթորկահույդ տարիներին, սոցիալիզմի բալոր թըշ-
ռամիների գեմ մղված դաժան պայքարում նա կոփ-
փում եր, ձեռք եր բերում մարտական տրադիցիա-
ներ, ամրապնդում և բազմապատկում եր կապերը
ժամաների հետ, կատարելագործում եր զեկավարե-
լու և ժամաների հետ միասին, մասսաների զլուխն
անցած՝ հաղթանակելու արվեստը։ Բոլցելիկյան կու-
սակցությունը, վորը մարդկությանը տվել ե Լենին
և Ստալին, վորը բաց ե արել նոր սոցիալիստական
աշխարհ, — ունի բացարիկ ժողովրդականություն,
հսկայական հեղինակություն։

Անսահման են խորհրդային ժողովրդի վստա-
հությունն ու սերը իր կուսակցության նկատմամբ,
սոցիալիզմի համար մղվող մարտերում ճանաչված,
ստուգված ու կոփված զեկավարի նկատմամբ։ Ա-
ռավել ևս մեծ ե կուսակցության պատասխանառությունը, առավել ևս բարդ են նրա խնդիրները, առա-
վել ևս բարձր են յուրաքանչյուր կոմունիստին ա-
ռաջադրվող պահանջները։ Յերկրի քաղաքական
կյանքում տեղի ունեցած շրջադարձը կուսակցու-
թյունը պարտավոր է դիմավորել ըստ ամենայնի
զինված և լիովին ապահովել իր զեկավար գերը նոր
ընտրություններում։ Թե ինչես պետք է անել այդ,
թե ինչ է պահանջվում դրա համար, բացարիկ պար-
զությամբ ասլած է Համբկ(ր)կ կենտկոմի պլենումի
յերեկ հրապարակված բանաձեռում։

«Դրա համար պահանջվում է, վոր կուսակցու-
թյունն ինքն անցկացնի հետեւողական զեմոկրատա-
կան պրակտիկա, վոր նա ներկուսակցական կյանքում
ժինչեւ վերջն անցկացնի զեմոկրատական ցենտրալի-
մի հիմունքները, ինչպես այդ պահանջում է կու-

սակցության կանոնադրությունը, վոր նա ինքն ու-
նենա այն անհրաժեշտ պայմանները, վորոնց շնորհիվ
կուսակցության բոլոր որդաններն ընտրովի լինեն,
վոր քննադատությունը և ինքնաքննադատությունը
զարդանան լիակատար չափով, վոր կուսակցական
ժամանակի առջև կուսակցական որդանների պատաս-
խանատությունը լիակատար լինի և վոր ինքը՝ կու-
սակցական մասսան լովին ակտիվացվի»։

Կենտկոմի պլենումն արձանագրեց, վոր շատ
կուսակցական կազմակերպություններում կոպիտ
կերպով խախտվում է կուսակցության կանոնադրու-
թյունը, գեմոկրատական ցենտրալիզմը հաճախ փո-
խարինվում է բյուրոկրատական ցենտրալիզմով։
Լայնորեն տարածված է զանազան զեկավար աշխա-
տողների կոռպուտացիայի ամենավնասակար պրակտի-
կան, քարտուղարների նշանակումը, կոմունիստնե-
րի իրավունքների վոտնահարումը, ինքնաքննադատու-
թյան ձնչումը։ Կուսակցական կազմակերպություն-
ների վորով զեկավարներ կադրերի ընտրության ու
առաջքաշման բոլցելիկյան սկզբունքները փոխարինել
են քաղքենիական, ընտանեկան սկզբունքներով։ Ար-
դեն պրակտիկայի մեջ է մտել այն, վոր յեթե պա-
տասխանատու կուսակցական աշխատողը գնում է նոր
մարդ, ապա նա անպայման իր հետեւց քաշ է տալիս
իր՝ իրը թե ստուգված աշխատողների «պոչը»։

Այսպես, որինակ, Յարուլավի մարզկոմի քար-
տուղար ընկեր Վայնովը գեռ նոր եր յեկել նոր
մարդ, յերբ սկսեց յերկրի բոլոր ծայրերից իր մոտ
աշխատանքի քաշել իր ծանոթներին, բարեկամներին։
Մարզկոմի շատ բաժինների վարիչների, Յարուլավի
քաղկոմի քարտուղարի, ուայկոմների քարտուղարնե-

բի և նույնիսկ քաղաքի վարիչի պաշտոնում նա նըստեցրել եր իր մարդկանց, վորոնց կազմակերպությունը բոլորովին չի ճանաչում, վորոնք առաջ են քաշված բացառապես ծանոթության կարգով, չին կապերի չնորհիվ:

Այսպիսի անպետք պրակտիկայի վասնզն այն է, վոր այդ պրակտիկան կազմակերպությունների մեջ առաջ և բերում ստորաքարչություն, սատիճանահարդություն, կասեցնում և տեղական կադրերի առումը, խղում և ստեղծում դեկավարության ու ժամաների միջև և նոպաստում և կուսակցության կանոնադրության հիմնական սկզբունքների խախտմանը: Այս բոլորը հաստատվում են թեկուղ նույն այդ Յարուսավլի կազմակերպության մեջ ստեղծված դրությամբ, վորտեղ նույնիսկ մարդային կուսակցական կոնֆերենցիան անց և կացել ստորաքարչության վորով, վորտեղ ուժեղ կերպով զարգացած և կոռապացիան, հարցման կարգով հարցերը լուծելը և այլն:

Կուսակցականության հիմնական պահանջները ժողոացության տալր, ներկուսակցական դեմոկրատիայի խախտումը անխուսափելիորեն հասցնում են կուսակցական որդաների՝ մասսաներից կտրվելուն, առաջ են բերում մի իրադրություն, յերբ կուսակցական դեկավարն իրեն չըջապատում են այնպիսի մարդկանցով, վորոնք ստորաքարչական յեռանզով տարված ստեղծում են չողոքորթության խեղդիչ մթնոլորտ, բթացնում են բոլցեկիյան զգաստությունը: Իսկ դրանից ողտում են թշնամիները, Փաշիզմի զործակալները — ստորներից ստոր տրոցկիստներն

ու աջ թափթփուկները: Յեվ պատահական չե, վոր չենց այն կազմակերպություններում, վորտեղ առանձնապես կոպիտ կերպով վունահարպել են ներկուսակցական դեմոկրատիայի հիմունքները, վորտեղ խեղդվել և ինքնաքննադատությունը, այլտեղ հեշտությամբ կարողացել են խրամատավորվել ոտոր տրոցկիստներն ու աջ թափթփուկները:

Այդպիսի անպետք պրակտիկայի ցայտուն որինակներ են հանդիսանում վերջին ժամանակներս Համ: Կ (բ) Կ կենտկոմի կողմից հայտնաբերված Աղով-Սկծովյան, կիեվի կազմակերպություններում ու Ավկրաինայի կ (բ) Կ կենտկոմում կուսակցական աշխատանքն աղաղակող կերպով անուշաբերության մատնելու, ներկուսակցական դեմոկրատիան խախտելու փաստերը: Այս որինակները, դժբախտաբար, յեղակի չեն: Դրանք այս կամ այն չափով հատուկ են բոլոր կուսակցական կազմակերպություններին: Համ: Կ (բ) Կ կենտկոմի պլենումը խիստ կերպով գատապարտեց կուսակցական աշխատանքի խեղաթյուրումներն ու թերությունները և բոլոր կուսակցական կազմակերպություններից պահանջեց վերականդել կուսակցության կանոնադրությունն ու դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքները:

Այս և ներկայումս գլխավորը, վորովհետեւ յուրաքանչյուրի համար պետք են հասկանալի լինի, վոր «...դեմոկրատական ցենտրալիզմի հիմունքների խախտումները վնաս են հասցնում կուսակցությանը, վորովհետեւ դրանք արգելակում են կուսակցության անդամների ակտիվության աճումը, մեր կուսակցության կյանքում քաղաքական հատուկ նշանակություն ունեցող ակտիվին զրկում են դեկավար աշխա-

տանքին մասնակցելու հնարավորությունից, կուսակցության անդամներին զրկում են կուսորգանների դուծունեյությանը վերահսկելու իրենց որինական իրավունքներից և դրանով իսկ խախում են դեկավարների ու կուսակցական մասսաների ճիշտ փոխհարաբերությունները» :

Մենք պետք են հասնենք այն բանին, վորպեսդի բոլոր կոմունիստները, բոլորն առանց բացառության, ակտիվ կերպով մասնակցեն կուսակցական կյանքին, վորպեսզի բոլոր կուսակցական կազմակերպություններն ակտիվ կերպով աշխատեն։ Այդ եր սովորեցնում մեզ լենինը, այդ են սովորեցնում ընկեր Ստալինը։ Մենք պետք են հասնենք այն բանին, վոր «կուսակցական մասսան վճռի ինչպես կուսակցական, այնպես և ընդհանուր գործնական հարցերը, կուսակցական մասսան ընդունի իր բանաձևերը և պարտավորեցնի իր կազմակերպություններին կենսագործել այդ բանաձևերը... Մեզ մոտ խոսքը վերաբերում ե գործողության դեմոկրատիզմին, յերբ կուսակցական մասսան ինքն ե վճռում հարցերը և ինքն ել գործում ե» (Ստալին)։

Ինքնաքննադատությունը բոլցելիզմի անկապտելի, մշտապես գործող դենքն ե։ Կուսակցական որդանների մեջ ընտրվելու համար առաջադրված թեկնածությունների գաղանի քվեարկությունը, վոր սահմանեց կենտկոմի պլենումը, միայն այն դեպքում կտա անհրաժեշտ արդյունքներ, յեթե կուսակցական կազմակերպությունների մեջ բարձրանա բոլցելիկյան ինքնաքննադատության նոր ալիք, ինքնաքննադատություն՝ անձնավորություններից անկախ։ Այն կուսակցական աշխատողը, վորը չգիտե ողտովել ինքնա-

քննադատությունից, իսկ առավել ես նա, ով ճնշում է ինքնաքննադատությունը — բոլցելի չե, այլ բուրուրկատ, վորին պետք ե դուրս վանդել կուսակցական ապարատից։ Ինքնաքննադատության ըստ ամենայնի ծավալումը կբարձրացնի մեր կադրերի գաղափարային մակարդակը, կուսակցական մասսային թույլ կտա իր միջավայրից ղեկավար աշխատանքի առաջ քաշել այնպիսի մարդկանց, վորոնք իսկապես ստուգված են բանվոր դասակարգի բոլոր թշնամիների դեմ մղվող պայքարում, կայուն են, մինչև վերջը նվիրված լենինի-Ստալինի կուսակցությանը և նրա կենտրոնական կոմիտեյին։

Հստվորում չպետք ե մոռանալ, վոր խոսքը վերաբերում է պրոլետարական, բոլցելիկյան ինքնաքննադատությանը, այնպիսի ինքնաքննադատությանը, վորը բացահայտում ե և ուղղում մեր թերությունները, վորի նպատակն ե բարձրացնել մեր ամբողջ աշխատանքը։ Այդ ինքնաքննադատությունը վոչ մերնդհանուր բան չունի մեզ թշնամի բանակից յեկող «քննադատության» հետ, վորն ուղղված ե մեր կուսակցության և Խորհրդային իշխանության դեմ։ Բանվոր դասակարգի թշնամիների դեմ մղվող պայքարում մենք չոր կպահենք վասողը։

Ընկեր Ժղանովի զեկուցման առթիվ Համ Կ(ր)Կ կենտկոմի պլենումի ընդունած վորոշումները մեծ ու պատասխանատու ծրագիր են բոլոր կուսակցական կազմակերպությունների համար։ Հարկավոր ե անհապաղ ձեռնտմուխ լինել նրա կատարմանը։ Դահուժկութափով կբարձրացնի կուսակցական մասսաների քաղաքական ակտիվությունը, կոժանդակի բոլցելիկյան կադրերի աճմանը։

Աշխատավորների մարտական ավանդաբարդը —
ԱԵՆԻՆԻ—Ստալինի կուսակցությունը—պետք եւ ըստ
ամենայնի զինված դիմավորի յերկրի քաղաքական
կյանքում տեղի ունեցող պատմական շրջադարձը և
ազահովի մեր հայրենիքի, մեր ժողովրդի եւ ավելի
հուժկու աճումը:

ԲՈՂՋԵՎԻԿՅԱՆ ՊԵԿԱՎՈՐՄԱՆ
ԵՅՈՒԹՅՈՒՆԸ

1937 թ. մարտի 9-ի
„Правда“ № 67 (7033)

Մեր յերկրի քաղաքական կյանքում կտրուկ չըր-
ջաղարձ ե կատարվում։ Նոր Սահմանադրությունը
տանում ե գեղի աշխատավորների քաղաքական ակ-
տիվության հետազա ուժեղացումը, գեղի խորհրդա-
յին դեմոկրատիայի ել ավելի մեծ ծաղկումը։
բնակչության նորանոր խավեր հաղորդակից են լի-
նում պետության կառավարմանը։ Ավելի քան յերբեք
աճել ե մեր կուսակցության գերը, մի կուսակցու-
թյուն, վորը կոչված ե գլխավորելու այդ լրջադարձը
և ապահովելու իր գեկավարությունը յերկրի գերա-
դույն որդանների առաջիկա ընտրություններում։
Մասսաների մեջ կուսակցության կողմից կա-
տարվող կուսակցական - քաղաքական աշխա-
տանքն այժմ նոր, միանդամայն բացառիկ նշա-
նակություն ե ստանում։ Հասել ե ժամանակը հան-
գես բերելու բոլշեվիկյան պրոպագանդայի, ազիտա-
ցիայի, կազմակերպչական գործունեյության խակա-
ն արվեստ։

Պետք ե լիակատար ուղղամտությամբ ասել,
վոր վոչ բոլոր կուսակցական կազմակերպություն-
ները պարզորոշ կերպով են ըմբռնում իրենց ինդիբ-
ները։ Որինակների համար հեռու զնալու կարիք
չկա։ Կուսակցության կենտրոնական կոմիտեյի ոլե-

նումը նշեց կուսակցական-քաղաքական աշխատանքն անուշադիր թողնելու աղաղակող փաստեր՝ Ազով-Սևծովյան յերկրկոմում, Կիևի մարզկոմում, Ռւկ-բախայի կ (բ) կ-ի Կենտկոմում և այլ կուսակ-ցական կազմակերպություններում։ Միակող-մանի կերպով տնտեսությամբ տարվելը և կու-սակցական-քաղաքական հարցերն անուշաղբության մատնելը թուլացրեց մեր կազմակերպությունների կապերը մասսաների հետ։ Մարդիկ սկսեցին իրենց որորել հաջողություններով։ Այդ ծնունդ եր տալիս բացրեանության, պարձենկոտության և ապուչային հիվանդության — անհոգության։

Հարկավոր ե, վորպեսզի բոլոր կոմունիստներն ել առանց բացառության հասկանան մեր ապրած մոմենտի յուրատեսակությունը, հասկանան մեր կու-սակցական կազմակերպությունների թույլ տված սիսալների եյությունը և վերակառուցվեն նոր ձեռվլ։ Մենք, կոմունիստներս, գործողության, հեղափո-խական պայքարի մարդիկ, ենք, մենք դասեր ենք քաղում, վոր սխալները չկրկնենք։

Գաղտնիք չե, վոր շատ կուսակցական կոմիտե-ների քարտուղարներ ավելի շատ սկսել են նմանվել խնդեներների, ազրոնոմների, հաշվապահների և մո-ռացել են, վոր իրենք դիմավորում են կուսակցական կազմակերպություններ, վորոնց ինդիրն ե ուղղու-թյուն տալ խորհրդային ու տնտեսական կազմակեր-պություններին և զեկավարել դրանք։ Մոռացել են, վոր իրենք պետք ե լինեն մասսաների քաղաքական այնպիսի զեկավարներ, վորոնք գիտեն ժամանակին ճանաչել և յերեան բերել թշնամուն։

Կարիք կա՞ արդյոք ապացուցելու, վոր տնտե-

սական աշխատանքով տարվելը և կուսակցական-քա-ղաքական հարցերը մոռացության տալը կործանա-րար և մեղ համար։ Հենց վոր կուսակցական կազմա-կերպությունը վերածվում է արտադրական-տեխնի-կական կազմակերպության, նա կորցնում է քաղա-քական ձիչտ կողմնորոշումը, կոմունիստները մոռա-նում են կապիտալիստական շրջապատճեմը, թշնամինե-րին, դառնում են իրենց քթից հեռու վոչինչ չտես-նող գործամոլներ։ Այդպիսի կոմունիստների պատ-կերպացման մեջ գոյություն ունեն դիմավորապես մի-այն մեքենաներ, տարա, պահեստի մասեր, պայմա-նագրեր, հաշվարկումներ, և նրանք աչքաթող են ա-նում ամենադիմավորը—մարդկանց, աշխատավորնե-րին, վորոնց քաղաքական կազմակերպիչներն ու դե-կավարները պարտավոր են լինել իրենք։

Մեզ այդպիսի ծայրահեղություններ պետք չեն։ Դրանք հակասում են Լենինի—Ստալինի ուսմունքին։ Զի կարելի կուսակցական աշխատանքը հակադրել տնտեսականին և վոտով-դլխով։ Թաղվել դրանցից միայն մեկի մեջ։ Ճի կարելի մոռանալ վո՛չ մեկը, վո՛չ ել մյուսը։

Այնինչ, արդեն նշաններ կան, վոր միքանի կուս-կազմակերպություններ կարող են մյուս կողմը նետ-վել և յերեսի վրա թողնել տնտեսական հարցերը։ Արդեն խոսակցություններ կան, թե «այժմ ավելի հեշտ կլինի», «վերացված են շատ պարտականու-թյուններ», «այժմ ցանքով չենք զբաղվում» և այլն։

Այսպիսի տրամադրությունները կուսակցու-թյան համար նույնքան կործանարար են, վորքան և կուսակցական-քաղաքական աշխատանքի անտեսումը, միմիայն տնտեսական գործերով տարվելը։ Այդ

պետք եւ հասկանալ մինչև վերջը, վորովհետեւ յեթե այդպիսի տրամադրություններ քիչ թե շատ լայն տարածում ստանան, մանավանդ այժմ, յերբ յերկիրը գտնվում է գարնանացանի նախորյակին, ասդա մեր անտեսական շինարարությունն զգալի կորուստ կունենա:

Իսկ վո՞րտեղից են առաջ յեկել այդպիսի տրամադրություններ: Դրանք արդյունք են այն բանի, վոր գեռ շատ կոմունիսաններ, այդ թվում նաև դեկավարներ, սխալ են պատկերացնում կուսակցության զերը բանվոր դասակարգի դիկտատորայի սիստեմում, մանավանդ ներկա ժամանակաշրջանում, յերբ խորհրդային գեմուրատիան պետք է իրականացվի եւ ավելի լայն չափով. չդիտեն այդ առթիվ կենինի ու Ստալինի տված ցուցումները:

Տնտեսության համար մենք պատասխանատու յենք, վորպես բանվոր դասակարգի դիկտատորայի հոգին հանդիսացող կուսակցություն: Մենք, կոմունիսաններս, իրավունք չունենք տնտեսությունից հեռանալու և լիակատար պատասխանատվություն ենք կրում սոցիալիստական շինարարության համար:

Բայց կուսակցական կազմակերպությունները չպետք է փոխարինեն և դիմապուրկ անեն խորհրդային ու տնտեսական այն որդաններին, վորոնք անմիջակամորեն զբաղվում են տնտեսական շինարարությամբ, ֆինանսներով, պլանավորմամբ և այլն: Կուսակցական կոմիտեները չպետք է վերաճեն տնտեսական ու խորհրդային շինարարության շտաբների: Կուսակցությունը հիմնական դեկավար ուժն է բանվոր դասակարգի դիկտատորայի սիստեմում, —սովորեցնում է ընկեր Ստալինը: «Երա դերն այն է,

վորպեսզի միավորի առանց բացառության պրոլետարիատի բոլոր մասսայական կազմակերպությունների աշխատանքը և նրանց դարձողություններն ուղղվի մի նորառակի, պրոլետարիատի աղասաղրման նորառակին» (Ստալին):

Այդ նշանակում է, վոր կուսակցությունն ըստ ամենայնի ամբացնում է խորհրդային, տնտեսական, պրոֆմիութենական կազմակերպությունները, նրանց միջոցով անց է կացնում իր վորոշումները, բարձրացնում է նրանց հեղինակությունները, ուղղություն է տալիս նրանց ամբողջ աշխատանքին: «Պրոլետարիատի գիկտատուրան, —ասում է ընկեր Ստալինը՝ բարդացած է կուսակցության դեկավար ցուցումներից, պլանա այդ ցուցումների կիրառումը պրոլետարիատի մասսայական կազմակերպությունների կողմից, պլանա գրանց կենսագործումը՝ բնակչության կողմից»:

Հարց է ծագում. ուրեմն ի՞նչ հիման վրա կուսակցական կազմակերպությունները փոխարինում են խորհրդաբներին, հոգային որգաններին, փաստորեն նրանց հեռացնում են տնտեսությունը դեկավարելուց, ձեռնամուխ են լինում առանց բացառության բոլոր դորձերին: Ծնկեր Ստալինը, խոսելով կուսակցության դեկավար գերի մասին, մատնանշել է. «Այդ, իհարկե, չի նշանակում, վոր կուսակցությունը կարող է փոխարինել կամ պետք է փոխարինի պրոֆմիություններին, խորհրդաբներին և մյուս մասսայական կազմակերպություններին: Կուսակցությունն իրականացնում է պրոլետարիատի դիկտատուրան: Բայց այդ նա իրականացնում է վաչ թե անմիջականորեն, այլ պրոֆմիությունների ողնությամբ, խորհրդաբնե-

քի և նրանց ձյուղավորումների միջոցով։ Առանց այդ «չարժավոկերի» անհնարին կլիներ քիչ թե շատ հաստատում դիմուասուրա»։

Այսպես, ուրեմն, լենինիզմը սովորեցնում է պայքար մղել վնասակար ծայրահեղությունների գեմ։ Նույն չափով կործանաբար և կուսակցության համար կուսակցական-քաղաքական հարցերը մոռացության տալը և տնտեսության ղեկավարումից հետ քաշվելը։ Հարկավոր և հմտորեն զուգորդել կուսակցական-քաղաքական աշխատանքը և տնտեսության ղեկավարումը, ինչպես հարկն և հենվելով խորչըդային ու տնտեսական կազմակերպությունների վրա։

Իսկ ի՞նչ պետք է անել, վորագեսդի այդ կազմակերպությունները միանդամայն մարտունակ լինեն և հաջողությամբ իրականացնեն կուսակցության ու կառավարության ցուցումները։

Նախ և առաջ՝ ամրացնել այդ կազմակերպությունները կաղըերով, ընտրել այնպիսի մարդիկ, վորոնք ընդունակ են տնտեսությունը ղեկավարել անձնվիրաբար ու նվիրվածորեն, վորոնք գործին խորապես հմուտ են։

Այդ պրոբլեմը, կաղըերի ընտրության պրոբլեմը, առանձնապես սուր կերպով դրված և գյուղատնտեսության ղեկավարման ընդապառում։ Արդյունաբերության մեջ դործը միքիչ ամելի լավ է։ Այդտեղ կաղըերը հիմնականում արդեն ստեղծվել են, մեծ դպրոց են անցել ստալինյան հնդամյակների իրականացման համար մղվող պայքարում։ Իսկ գյուղատնտեսական կազմակերպություններում կաղըերն ավելի թույլ են ու ավելի քիչ պատրաստված, և կուսակցական կազմակերպություններին վիճակված են,

և դեռ պետք է վիճակված լինի, զբաղվել տնտեսական շինարարության նույնիսկ մանրունքով, մինչեւ վոր հողային որդաններն ինչպես հարկն և ամրանան։

Այժմ յուրաքանչյուր կուսակցական կազմակերպության առջև ամբողջ հասակով ծառացած և գյուղատնտեսության ղեկավարման համար կաղըեր ընտրելու հարցը։ Դա մեծ, բարդ աշխատանք է, վոր ամենախելամիտ վերաբերմունք և պահանջում։ Կաղըերը պետք է ընտրել՝ առաջնորդվելով յուրաքանչյուր աշխատողի իրական արժեքով և վոչ թե «մեր մարդն է» կեղծ սկզբունքով։ Անձնական ծանոթությունը, մի անձնավորության նկատմամբ ունեցած նվիրվածությունը քաղքենիական նշաններ են, և դրանցով չի կարելի առաջնորդվել մարդկանց ընտրելիս։ Կաղըերը պետք է ընտրել լենինյան-ստալինյան սկզբունքի հիման վրա—քաղաքականապես ստուգելով մարդկանց, նրանց նվիրվածությունը կուսակցությանը, նրա կենտրոնին, ստուգելով նրանց զործնական պիտանիությունը։

Վրա յե հասնում կուսակցական կազմակերպությունների աշխատանքի արմատական վերակառուցման շրջանը։ Դրա հաջողությունը կախված է այն բանից, թե ինչպես հասական կուսակցական ակտիվն իր խնդիրները, ինչպես կտանի իր հետեւց կոմունիստներին։ Կենտրոնական կոմիտեի ողենումի վորոշումները պետք են հասցել յուրաքանչյուր կոմունիստի, այդ վորոշումները պետք են լայնորեն հայտնի լինեն բոլոր աշխատավորներին։ Դեռ աշխատանքը շատ կա։ Ուստի վնասակար ու հիմար բան կը մինի զործն այնպիս պատկերացնել, ինչպես անում են մի բանի կենտրոնական թերթեր, — թե կուսակցու-

Քյունք և առերողջ ժողովուրդն արգեն ուսումնասիրել ու յուրացը են կենտկոմի պլենումի վորոշումները։ Այդ վորոշումները դեռ ինչպես հարկն և հայտնի չեն մասսաներին, իսկ շաղակրատ լրագրողներն արգեն ավետում են համատարած վողջունների ու հավանությունների մասին։ Իրականության այդպիսի կեղծ պատկերումը զինաթափ է անում կուսակցական կազմակերպություններին և բացի մնասից վոչինչ չի կարող տար։

Ասանց մի կողմից մյուսը նետվելու, լավ հիշելով և իրականացնելով լենինի ու Ստալինի ցուցումները, մասսաների գլուխն անցած, համաշափ քայլով առաջ կդնա մեր կուսակցությունը դեպի կոմունիստական հասարակության բարձունքները։

ԲՈՎԱՆԴԵԿՈՒԹՅՈՒՆ

Ինֆորմացիոն հաղորդագրուրյուն Համ.Կ(թ)Կ
Կենտկոմի հերթական պլենումի մասին 5

Կուսակցական կազմակերպությունների նախապատրաստումը ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի՝ նոր ընտրական սիստեմով կառարելիք ընտրություններին և կուսակցական-քաղաքական աշխատանքի համապատասխան վերակառուցումը (Համ.Կ(թ)Կ կետկոմի պլենումի բանաձևն ընկ. ՃԳԱ-ՆԲՎՀ զեկուցման առթիվ՝ ընդունված 1937 թ. փետրվարի 27-ին) 7

Ինքնաբնադրության և մասաների հետ կապված լինելու նշանաբանը (1937 թ. մարտի 6-ի «Պրավդա» № 64 (7030)) 19

Զվորնահարել Կուսակցուրյան անդամի իրավունքները (1937 թ. մարտի 7-ի «Պրավդա» № 65 (7031)) 29

Բոլշևիկյան դեկավարման եյուրյումը (1937 թ. մարտի 9-ի «Պրավդա» № 67 (7033)) 39



Թարգմ. և կոնտրոլ սրբագրիչ ՅԵ. Տեր-Միհասյան
Տեխնիկական խմբագիր Մ. Եփրհկ
Սրբագրիչ Լ. Աքովյան
Գլավլիստի լիազոր Խ— 4873.
Պատովեր № 440. Տիրաժ 10.000
Հանձնված է արտադրության 17/III 1937
Ստորագրված է տպագրելու 18/III 1937
Գինը 40 կ.

Պետհրատի տպարան

ՀՀ Ազգային գրադարան



NL0180792

ԳԻՆԸ 40 ԿՈՄ.

